ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Նունուֆար Ալեքյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության ատոմային էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա,

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն 2025 թվականի մայիսի 12-ից 16-ը Մոսկվայում Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կողմից կազմակերպված «Siting for Nuclear Power Plants, Including SMRs» խորագրով միջտարածաշրջանային վերապատրաստման դասընթացին,

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   ԱԷՄԳ-ի կարևորագույն մոտեցման համատեքստում՝ փոքր մոդուլյար ռեակտորներով միջուկային տեղակայանքների կառուցման նպատակով վերջինիս տեղակայման վայրի և օժանդակ օբյեկտների վերաբերյալ գիտելիքների և հասկացողության բարելավումն՝ օգնելու միջուկային էներգիայի ոլորտում ներդրում կատարող և ընդլայնող երկրներին զարգացնել ենթակառուցվածքային հարցերը, որոնք ընդգրկում են հետևյալ ոլորտները՝
   - ԱԷՄԳ-ի կարևորագույն մոտեցումը և միջուկային ենթակառուցվածքների 19 հարցերը,
   - Հարթակի ընտրության գործընթացները և նախապայմանները, հնարավոր տեղակայման վայրի որոշումը և վերջինիս մանրամասն բնութագրման նախապատրաստումը,
   - Տեղակայման վայրի ընտրության համապատասխան չափորոշիչների սահմանումը,
   - Ինտեգրված կառավարման համակարգի մշակումը և պահպանումը,
   - Հիմնական կազմակերպությունների դերն ու պատասխանատվությունը տեղակայման վայրի ընտրության յուրաքանչյուր փուլում և միջուկային էներգիայի ծրագրի մշակումը՝ ներառյալ կարգավորող և բնապահպանական մարմինների միջև փոխգործակցությունը,
   - Տեղակայման վերաբերյալ ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտներն ու հրապարակումները, որոնք ընդգրկում են անվտանգային և ոչ անվտանգային հարցեր:
   - Տեղակայման և օժանդակ կառույցների փոխգործակցությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը և այլ ենթակառուցվածքային հարցեր, ինչպիսիք են անվտանգությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, հաղորդման ցանցը և այլն,
   - Տեղակայման վերաբերյալ յուրահատուկ և հստակ հարցեր և նկատառումներ՝ կապված Ատոմային էներգիայի ներդրման հետ,

- Ատոմային էներգիայի ծրագրի համար մարտահրավերներ և քաղված դասեր՝ տեղակայման դեպքում,

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Միջոցառման շրջանակներում ներկայացվել են դասախոսություններ ինչպես Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) ներկայացուցիչների, հրավիրված փորձագետների, այնպես էլ Ռուսաստանի «Ռոսատոմ» պետական կորպորացիայի մասնագետների կողմից, կազմակերպվել է նաև այցելություն Կալինինի ատոմակայան, որը հանդիսանում է Կենտրոնական Ռուսաստանի էլեկտրաէներգիա արտադրող խոշորագույն էլեկտրակայանը:
Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Բրազիլիայի, Եթովպիայի, Գանայի, Ինդոնեզիայի, Իրանի, Հորդանանի, Ղազախստանի, Քենիայի, Մոնղոլիայի, Մարոկոյի, Նիգերիայ, Ռուանդայի, Սենեգալի, Թունիսի, Ուգանդայի, Զամբիայի Թայլանդի. ներկայացուցիչներ, որոնց մի մասը հանդես են եկել ելույթներով: Ներկայացվել է տարբեր երկների ծրագրերը՝ կապված փոքր մոդուլյար ռեակտորների հնարավոր տեղակայման, դրանցով աշխատող տեղակայքների կառուցման, շահագործման, շահագործումից դուրսբերման ինչպես նաև ատոմային էներգետիկայի բնագավառում համապատասխան գործունեության լիցենզաների ստացման, դրանց տրամադրման հետ կապված հարցեր:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման ավարտին կազմակերպիչների և մասնակիցների կողմից շեշտվել է հետագայում ևս նմանատիպ միջոցառումների անցակացման կարևորությունը՝ հաշվի առնելով ատոմային էներգետիկայի բնագավառում հետագա զարգացումները:
Հանդիպման ավարտին տրվել է վկայական:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ակնկալվում է, որ նմանատիպ հանդիպումների անցկացումը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել ատոմային էներգետիկայի բնագավառի նախանշված ծրագրերը՝ կիրառելով բնագավառում առաջատար երկրների փորձը և ժամանակակից տեխնոլոգիաները:

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության
ատոմային էներգետիկայի բաժնի
գլխավոր մասնագետ — Նունուֆար Ալեքյան

19.05.2025թ.